

Հաստատված է
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի գիտական խորհրդի
2014 թվականի մայիսի 7-ի նիստում,
արձանագրություն N 6,
գիտական խորհրդի նախագահ,
ՀՊՏՀ ռեկտոր Կ.Լ. Աթոյան
« _____ » 2014 թ.



Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
ՕՏԱՐԵՐԿՐԱԳԻ ՈՒՍՈՒՄՆԱԾՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (այսուհետ՝ համալսարան) օտարերկրացի ուսումնառողների կրթական ծրագրերի կրեդիտային հենքով ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները:
2. Ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների գնահատման հետ կապված հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն կարգով, կարգավորվում են համալսարանում գործող համապատասխան կանոնակարգերով և իրավական ակտերով:
3. Համալսարանում օտարերկրացի ուսումնառողների համար կազմակերպվում են նախապատրաստական, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր:
4. Օտարերկրացի ուսումնառողների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական գործընթացը կարող է կազմակերպվել այլ ժամանակացույցով: Անհրաժեշտության դեպքում պարապմունքները կարող են կազմակերպվել մոդուլային ցիկլերով՝ ապահովելով ուսումնական պլանում ներառված լսարանային և արտալսարանային ժամերի ծավալը:
5. Օտարերկրացի ուսումնառողների նախապատրաստական ծրագրի ուսումնական գործընթացը կարող է կազմակերպվել աշնանային և գարնանային կիսամյակների ընթացքում, ցանկացած ժամանակահատվածում՝ համաձայն հաստատված ուսումնական պլանի:

II. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

6. Նախապատրաստական դասընթացների մոդուլները գնահատվում են մեկ գործոնով՝ 100 միավորային համակարգով:

7. Նախապատրաստական բոլոր դասընթացները դրական արդյունքով ավարտած ունկնդիրներին տրվում է համապատասխան ավարտական հավաստագիր, որի հիման վրա նա կարող է ուսումը շարունակել բակալավրիատում:

8. Համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերն իրականացվում են գիտելիքների ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգի կիրառմամբ: Ուսումնառողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում գնահատման մի քանի գործոնների և դրանց կշիռների հիման վրա՝ 100 միավորային համակարգով:

9. Ինչպես ստուգարքով, այնպես էլ քննությամբ ավարտվող մոդուլների համար բազմագործոնային գնահատման համակարգը կարող է ներառել հետևյալ գործոնները.

Բակալավրիատում՝

- 1) հաճախումներ և ընթացիկ ակտիվություն,
- 2) միջանկյալ ստուգում,
- 3) ուսանողի անհատական աշխատանք (գրավոր),
- 4) ամփոփիչ ստուգում:

Մագիստրատուրայում՝

- 1) ընթացիկ ակտիվություն,
- 2) միջանկյալ ստուգում,
- 3) գիտահետազոտական աշխատանք (գրավոր),
- 4) ամփոփիչ ստուգում:

10. Ուսումնական տարվա սկզբին յուրաքանչյուր առարկայի կամ մոդուլի գնահատման գործոնները, գիտելիքների ստուգման ձևը (գրավոր կամ բանավոր) և դրանց կշիռները ներկայացնում է համապատասխան առարկան կամ մոդուլը դասավանդող ամբիոնը կամ դասախոսը, մոդուլի համառոտ ծրագրում (syllabus):

11. Բակալավրիատում անհատական աշխատանք պարունակող մոդուլների համար «հաճախումներ և ընթացիկ ակտիվություն» գործոնի առավելագույն գնահատականը սահմանվում է 20, իսկ անհատական աշխատանք չպարունակողների համար՝ 32:

12. Յուրաքանչյուր մոդուլի գնահատման համար պարտադիր են «հաճախումներ և ընթացիկ ակտիվություն» և «ամփոփիչ ստուգում» գործոնները:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՀԵՌԱՑՎԵԼՈՒ ԴԵՊԲԵՐԸ

13. Ուսումնառողը համալսարանից կարող է հեռացվել՝

- 1) ակադեմիական ոչ բավարար առաջադիմության համար.
- 2) փորձառության հաշվետվության պաշտպանությունից դրական գնահատական չապահովելու դեպքում (վերջնական հաշվարկային գնահատականը փոքր է 40-ից (առանց կլորացման) և/կամ ուսանողը չի ներկայացրել փորձառության հաշվետվություն և/կամ չի մասնակցել փորձառությանը).

3) կիսամյակի կամ նախապատրաստական դասընթացների ընթացքում 100 և ավելի ժամ բացակայության դեպքում: